«Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի նոյեմբերի 12-ի N 1301-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N -Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 12-Ի N 1301-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի նոյեմբերի 12-ի «Երրորդ երկրներից քաղաքացիական և ծառայողական զենքի, դրա հիմնական (բաղկացուցիչ) մասերի ու փամփուշտների ներմուծման, արտահանման և (կամ) տարանցիկ փոխադրման եզրակացության (թույլատրող փաստաթղթի) տրամադրման կարգը, ինչպես նաև երրորդ երկրներից Հայաստանի Հանրապետության մաքսային տարածք ներմուծման, Հայաստանի Հանրապետության մաքսային տարածքից արտահանման և Հայաստանի Հանրապետության մաքսային տարածքով տարանցիկ փոխադրման դեպքում սահմանափակումների ենթակա քաղաքացիական և ծառայողական զենքի, դրա հիմնական (բաղկացուցիչ) մասերի ու փամփուշտների ցանկը հաստատելու և լիազոր մարմին ճանաչելու մասին» N 1301-Ն որոշման N 1 հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) 4-րդ կետի 1-ին ենթակետում «զենքի արտադրության» բառերից հետո լրացնել «և առևտրի» բառերը, իսկ «իսկ զենքի առևտրի լիցենզիա ունեցող իրավաբանական անձանց» բառերը փոխարինել «սպորտային հրաձգությանմբ զբաղվող կազմակերպություններին» բառերը.

2) 4-րդ կետի 5-րդ ենթակետում և 5-րդ կետի 6-րդ ենթակետում «փորձարկումների» բառը փոխարինել «գնահատման» բառով.

3) 6-րդ կետի 7-րդ ենթակետը շարադրել նոր խմբագրությամբ՝

«7) համապատասխանության գնահատման (համապատասխանության սերտիֆիկատ կամ համապատասխանության հայտարարագիր) փաստաթղթի պատճենը.».

5) 7-րդ կետում՝ «երեք» բառը փոխարինել «յոթ» բառով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2022 թվականի հոկտեմբերի 5-ի «Զենքի շրջանառության կարգավորման մասին» ՀՕ-368-Ն օրենքի ուժի մեջ մտնելու օրը:

Հայաստանի Հանրապետության

վարչապետ Ն. Փաշինյան

«____»_____ 2023թ.
Երևան